



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ԳԻՏԱՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՐԾԻՔ
(AMICUS CURIAE) № 01/21

12.01.2021 թ.

ք. Երևան

Փաստաբան Կարեն Թումանյանը 148 քաղաքացիների (այսուհետ՝ Դիմողներ) անունից դիմել է ՀՀ Սահմանադրական դատարան՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի (ՀՕ-110-Ն) 419-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝ ՀՀ Սահմանադրությանը (այսուհետ՝ Սահմանադրություն) համապատասխանության հարցով:

Մասնավորապես, Դիմողները վիճարկում են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համապատասխանությունը Սահմանադրության 5-րդ հոդվածի 3-րդ մասին, 61-րդ հոդվածի 1-ին մասին, 63-րդ հոդվածի 1-ին մասին:

Դիմողները գտնում են, որ օրենսդիրը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված նորմի ձևակերպումը պետք է սահմաներ այն աստիճանի հստակ, որ դատավարական կողմերի համար բավարար չափով հստակ լիներ դատարան դիմելու իրենց իրավունքի շրջանակը:

Ըստ դիմողների՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում նշված «(...) կամ եթե անձը տվյալ վճռի կամ որոշման ուժի մեջ մտնելու պահին ունեցել է այդ իրավունքը միջազգային պայմանագրով նախատեսված պահանջներին (ժամկետներին) համապատասխան իրացնելու հնարավորություն» ձևակերպումն այն աստիճանի չի համապատասխանում իրավական որոշակիության սկզբունքին, որ վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավորների մի մասը դիմողների կողմից ներկայացված վերաքննիչ բողոքներն ընդունել է վարույթ և վարույթ ընդունելու հիմնավորումներում նշել որպես «Օսմանյանը և Ամիրադյանն ընդդեմ Հայաստանի գործով» կայացած վճիռն իբրև նոր հանգամանքի առկայության փաստ, իսկ մյուս մասը՝ դիմողների ներկայացրած վերաքննիչ բողոքներն ընդհանրապես վարույթ չի ընդունել պատճառաբանելով, որ Եվրոպական դատարանի վճիռը դատավարական կողմին չի վերաբերում:

Դիմողներն արձանագրում են, որ եթե Եվրոպական դատարանի վճռով կամ որոշմամբ արձանագրվում է իրավունքի համակարգային խախտում, ապա այն անձը, որի իրավունքը խախտվել է իրավունքների պաշտպանության համակարգային

ձախողման հետևանքով, առկա կարգավորումների պայմաններում չի կարող դիմել դատարան իր վերաբերյալ կայացված դատական ակտ վերանայելու համար: Նման պարագայում իմաստագուրկ է դառնում Սահմանադրությամբ ամրագրված այն սկզբունքը, որ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերի և օրենքների միջև հակասության դեպքում կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը, ինչպես նաև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին 1950 թվականի կոնվենցիայի 46-րդ հոդվածի այն պահանջը, ըստ որի՝ մասնակից պետությունները պարտավորվել են կատարել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վերջնական վճիռները ցանկացած գործերի վերաբերյալ, որոնցում նրանք կողմ են:

Դիմողները գտնում են, որ իրենց գործերով Հայաստանի դատարանների կողմից վերջնական դատական ակտերի վերանայումը նահանջ չէ իրավական որոշակիության սկզբունքից, եթե այդ ակտերի վերանայման նպատակը մարդու հիմնարար իրավունքի խախտմանը հանգեցրած դատական սխալի ուղղման նպատակ է հետապնդում:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Այսպես, Դիմողները վիճարկում են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համապատասխանությունը Սահմանադրության 5-րդ հոդվածի 3-րդ մասին, 61-րդ հոդվածի 1-ին մասին, 63-րդ հոդվածի 1-ին մասին:

Վիճարկվող՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի բովանդակությունը հետևյալն է.

1. Նոր հանգամանքները հիմք են դատական ակտի վերանայման համար, եթե՝

2) Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրի հիման վրա գործող միջազգային դատարանի՝ ուժի մեջ մտած վճռով կամ որոշմամբ հիմնավորվել է անձի՝ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրով նախատեսված իրավունքի խախտման փաստը, կամ եթե անձը տվյալ վճռի կամ որոշման ուժի մեջ մտնելու պահին ունեցել է այդ իրավունքը միջազգային պայմանագրով նախատեսված պահանջներին (ժամկետներին) համապատասխան իրացնելու հնարավորություն.

Սահմանադրության 5-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝

3. Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերի և օրենքների նորմերի միջև հակասության դեպքում կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը:

Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

1. Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

1. Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

Այսպես, Դիմողները վիճարկում են Օրենսգրքի վերը մեջբերված նորմը այն հիմնավորմամբ, որ այն բավականաչափ հստակ և որոշակի սահմանված չէ, արդյունքում պարզ չէ, թե Եվրոպական դատարանի վճռով կամ որոշմամբ արձանագրված իրավունքի համակարգային խախտման դեպքում արդյոք անձն իրավունք ունի նոր հանգամանքի հիմքով պահանջել իր նկատմամբ կայացված դատական ակտի վերանայում, եթե Եվրոպական դատարանում քննվող տվյալ գործով ինքը կողմ չի հանդիսացել:

Անդրադառնանք անձի դատական պաշտպանության, ինչպես նաև անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի քննության իրավունքի իրացման հարցին:

Սահմանադրության 61-րդ հոդվածի և 63-րդ հոդվածի սահմանադրաիրավական նորմերը համանման բովանդակությամբ սահմանված էին մինչև 2015թ. դեկտեմբերի 6-ի հանրաքվեով ընդունված սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածներում, որոնց վերաբերյալ ՀՀ Սահմանադրական դատարանն իր դիրքորոշումն է արտահայտել 2006թ. հոկտեմբերի 18-ի ՄԴՈ-652, 2006թ. նոյեմբերի 16-ի ՄԴՈ-665, 2007թ. ապրիլի 9-ի ՄԴՈ-690 և մի շարք այլ որոշումներում: Նշված որոշումներով բազմիցս անդրադառնալով արդարադատության մատչելիության և արդյունավետության խնդիրներին, առաջնորդվելով ՀՀ Սահմանադրության 1, 3, 14, 18, 19, 42, 43 և այլ հոդվածներով, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի, միջազգային իրավական այլ փաստաթղթերում ամրագրված հիմնադրույթներով, վկայակոչելով նաև ժողովրդավարության զարգացման միջազգային փորձն ու Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկան, կարևորել է անձի իրավունքների արդյունավետ պաշտպանությունը երաշխավորելու համար նորմատիվ իրավական բավարար նախադրյալների ստեղծումն ու զարգացումը՝ հատկապես միջազգային այն պարտավորությունների շրջանակներում, որպիսիք Հայաստանի Հանրապետությունն ստանձնել է Եվրոպայի խորհրդի առջև: Դատական պաշտպանության իրավունքն իր ամրագրումն է գտել մի շարք միջազգային իրավական փաստաթղթերում, այդ թվում՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» 1950թ. Եվրոպական կոնվենցիայում և Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի դատական նախադեպերում: Այս իրավունքի հիմնական բովանդակությունը հանգում է անձի իրավունքների և ազատությունների պաշտպանության համար դատարան դիմելու իրավունքի երաշխավորմանը և պետության կողմից այդ իրավունքի իրացման համար արդյունավետ միջոցների և պայմանների ստեղծման պարտականությանը: Անձի իրավունքների ապահովման ու պաշտպանության տեսանկյունից Սահմանադրության 18-րդ հոդվածի նպատակը իրավունքների խախտումների մասին անձի պնդումների դատական քննության և այդպիսի խախտումների հետևանքները վերացնելու

իրավունքի երաշխավորումն է: Այդ իրավունքը սահմանափակման ենթակա չէ, և արդար դատավարության իրավունքը ցանկացած ժողովրդավարական հասարակության հիմնական հատկանիշներից մեկն է: Անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքից ածանցվում է պետության պոզիտիվ պարտականությունը՝ ապահովել այն թե՛ նորմաստեղծ, թե՛ իրավակիրառման գործունեություն իրականացնելիս: Դա ենթադրում է օրենսդրի պարտականությունը՝ լիարժեք դատական պաշտպանության հնարավորություն և մեխանիզմներ ամրագրել օրենքներում:

ՀՀ Սահմանադրական դատարանը 2007 թվականի նոյեմբերի 28-ի ՍԴՈ-719 որոշման մեջ նշել է. «6. Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ հայցը կամ դիմումը դատարան՝ իրավական պաշտպանության այն միջոցներն են, որոնցով հիմնական իրավունքների, այդ թվում դատական պաշտպանության իրավունքի կրող հանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձը պաշտպանվում է իր իրավունքների տարաբնույթ խախտումներից, որոնք կարող են կատարվել ինչպես հանրային իշխանության, այնպես էլ մասնավոր անձանց կողմից: Իշխանության ոտնձգություններից անձի պաշտպանվելու ամենաարդյունավետ միջոցը դատարան դիմելու նրա իրավունքն է, որը Հայաստանի Հանրապետությունում, ինչպես և բոլոր այլ իրավական պետություններում, ունի սահմանադրական (հիմնարար) իրավունքի բնույթ (ՀՀ Սահմանադրության 18 հոդվածի 1-ին մաս): Անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքից ածանցվում է պետության պոզիտիվ պարտականությունը՝ ապահովել այն թե՛ նորմաստեղծ, թե՛ իրավակիրառման գործունեություն իրականացնելիս: Դա ենթադրում է, մի դեպքում, օրենսդրի պարտականությունը՝ լիարժեք դատական պաշտպանության հնարավորություն և մեխանիզմներ ամրագրել օրենքներում, մյուս կողմից, իրավակիրառողի պարտականությունը՝ առանց բացառությունների քննարկման ընդունել անձանց՝ օրինական կարգով իրենց ուղղված դիմումները, որոնցով նրանք հայցում են իրավական պաշտպանություն իրենց իրավունքների ենթադրյալ խախտումներից: Ակնհայտ է, որ առաջին հերթին այս պահանջը վերաբերում է դատարաններին, քանի որ այդ մարմիններն են, որ օժտված են իրավական պաշտպանության համապարփակ լիազորություններով: Բացի դրանից, դատական իշխանությունն է, որ անկախ է բոլոր այլ մարմիններից և պարտավոր է վերահսկել իշխանության մյուս ճյուղերին պատկանող բոլոր մարմինների կողմից իրավաչափ գործելու իրենց պարտականության կատարումը, վերացնելով այդ մարմինների այն իրավական ակտերը, գործողությունները կամ անգործությունը, որոնք խախտում են անձանց սուբյեկտիվ իրավունքները կամ, այլ կերպ՝ ոտնձգում են Սահմանադրությամբ երաշխավորված իրավակարգի դեմ»:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր մի շարք վճիռներում առանձնահատուկ կարևորել է, որ պետությունները պարտավոր են իրենց ներպետական օրենսդրությամբ անհրաժեշտ իրավական նախադրյալներ ստեղծել անձի իրավունքների արդյունավետ պաշտպանությունը երաշխավորելու համար:

Այսինքն՝ անձը, դիմելով դատարան, պետք է լիարժեք դատական պաշտպանության իրավունք ունենա, ապահովված լինի արդար դատաքննություն իրականացնելու պետության պարտավորությամբ, իր իրավունքների լիարժեք պաշտպանության լեգիտիմ ակնկալիքով:

ՀՀ Սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներում անդրադարձել է իրավական որոշակիության սկզբունքին և արտահայտել հետևյալ դիրքորոշումը.

2019 թվականի ապրիլի 2-ի ՍԴՈ-1452 որոշման մեջ Սահմանադրական դատարանը նշել է. «Իրավական որոշակիության սկզբունքն ընկած է Սահմանադրության անփոփոխելի 1-ին հոդվածի հիմքում, որով սահմանվում է, որ Հայաստանի Հանրապետությունն ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, **իրավական պետություն է:**

Իրավական պետությունը ենթադրում է իրավական օրենքի առկայություն, որը պետք է լինի հնարավորինս հստակ ու որոշակի և հնարավորություն տա դրա հասցեատերերին ձևավորելու և դրսևորելու համապատասխան վարքագիծ: Վերոնշյալ դիրքորոշումը հաստատվում է Սահմանադրական դատարանի 08.04.2008թ. ՍԴՈ-753 որոշմամբ, որում, մասնավորապես, նշվում է. «Իրավական պետության սկզբունքը, ի թիվս այլնի, պահանջում է նաև իրավական օրենքի առկայություն: Վերջինս պետք է լինի բավականաչափ մատչելի՝ իրավունքի սուբյեկտները պետք է համապատասխան հանգամանքներում հնարավորություն ունենան կողմնորոշվելու՝ թե տվյալ դեպքում ինչ իրավական նորմեր են կիրառվում: Նորմը չի կարող համարվել «օրենք», եթե այն ձևակերպված չէ բավարար ճշգրտությամբ, որը թույլ կտա իրավաբանական և ֆիզիկական անձանց դրան համապատասխանեցնել իրենց վարքագիծը. նրանք պետք է հնարավորություն ունենան կանխատեսել այն հետևանքները, որոնք կարող է առաջացնել տվյալ գործողությունը»:

Անդրադառնալով իրավական որոշակիության սկզբունքին՝ Սահմանադրական դատարանն իր մեկ այլ՝ ՍԴՈ-1176 որոշմամբ կարևորել է նաև օրենսդրության մեջ կիրառվող հասկացությունների հստակությունը՝ նշելով, որ «...իրավական որոշակիության ապահովման տեսանկյունից օրենսդրության մեջ օգտագործվող հասկացությունները պետք է լինեն հստակ, որոշակի և չհանգեցնեն տարաբնույթ մեկնաբանությունների կամ շփոթության:

Վերոգրյալով պայմանավորված՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ իրավական որոշակիության սկզբունքը ենթադրում է ինչպես հնարավորինս հստակ իրավակարգավորման առկայություն, այնպես էլ դրա կանխատեսելիության ապահովում: Մասնավորապես, իրավակարգավորման ձևակերպումը պետք է հնարավորություն տա անձին ոչ միայն դրան համապատասխան ձևավորելու իր վարքագիծը, այլև կանխատեսելու, թե ինչպիսի՞ն կարող են լինել հանրային իշխանության գործողությունները, և ի՞նչ հետևանքներ կառաջանան տվյալ իրավակարգավորման կիրառման արդյունքում»:

2016 թվականի մայիսի 3-ի ՍԴՈ-1270 որոշման մեջ Սահմանադրական դատարանն արտահայտել է հետևյալ դիրքորոշումը. «7. ՀՀ Սահմանադրության 1-ին

հողվածով ամրագրված իրավական պետության կարևորագույն հատկանիշներից է իրավունքի գերակայությունը, որի ապահովման գլխավոր պահանջներից են իրավական որոշակիության սկզբունքը, իրավահարաբերությունների կարգավորումը բացառապես այնպիսի օրենքներով, որոնք համապատասխանում են որակական որոշակի հատկանիշների՝ հստակ են, կանխատեսելի, մատչելի: ՀՀ Սահմանադրական դատարանը մի շարք որոշումներում (ՄԴՈ-630, ՄԴՈ-1142) անդրադարձել է իրավական որոշակիության սկզբունքին և գտել է, որ այն անհրաժեշտ է, որպեսզի համապատասխան հարաբերությունների մասնակիցները ողջամիտ սահմաններում ի վիճակի լինեն կանխատեսել իրենց վարքագծի հետևանքները և վստահ լինեն ինչպես իրենց պաշտոնապես ճանաչված կարգավիճակի անփոփոխելիության, այնպես էլ ձեռք բերված իրավունքների և պարտավորությունների հարցում»:

Անդրադառնալով նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման ինստիտուտին՝ ՀՀ Սահմանադրական դատարանը 2008 թվականի սեպտեմբերի 9-ի ՄԴՈ-758 որոշման մեջ արձանագրել է հետևյալ դիրքորոշումը. «12 Սահմանադրական դատարանն այս կապակցությամբ հարկ է համարում վկայակոչել նաև Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 19.01.2000 թ. Նախարարների ներկայացուցիչների 694 նստաշրջանում ընդունված «Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումների հիման վրա ներպետական մակարդակով գործերի վերանայման և վարույթի նորոգման մասին» N R (2000) 2 հանձնարարականը: Վերջինս, մասնավորապես, ամրագրում է. «Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն նկատի ունենալով, որ Դատարանի վճիռների կատարման նկատմամբ վերահսկողություն իրականացնելուն ուղղված Նախարարների կոմիտեի պրակտիկան ցույց է տալիս, որ որոշակի հանգամանքներում գործերի վերանայումը կամ վարույթի նորոգումը հանդիսանում է ամենաարդյունավետ, եթե ոչ միակ միջոցը *restitutio in integrum*-ի հասնելու համար. 1. Առաջարկում է Պայմանավորվող պետություններին հանդովել, որ ներպետական մակարդակում գոյություն ունեն համարժեք հնարավորություններ *restitutio in integrum*-ի հասնելու համար....»: Ելնելով վերոհիշյալից՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ Եվրոպական դատարանի վճռի հիման վրա ներպետական դատական ակտի վերանայման առկա իրավակարգավորումն առանձին դեպքերում ոչ միայն հնարավորություն չի տա վերականգնելու անձի խախտված իրավունքը, այլ նաև կխոչընդոտի Հայաստանի Հանրապետության կողմից Եվրոպական դատարանի վճիռները կատարելու՝ Կոնվենցիայով ստանձնած պարտավորության լիարժեք կատարմանը: Սահմանադրական դատարանը նաև արձանագրում է, որ Եվրոպական դատարանի պրակտիկայում հետևողականորեն զարգանում է, այսպես կոչված՝ «ուղենիշ (ղեկավար) վճիռների» ինստիտուտը: Վերջինիս էությունը կայանում է նրանում, որ Եվրոպական դատարանը տվյալ պայմանավորվող պետության դեմ ուղղված մի շարք միանման գանգատներից ընտրում է մեկ առավել տիպային օրինակ և ըստ էության քննում և վճիռ է կայացնում միայն այդ գանգատի կապակցությամբ. մնացած գանգատների հեղինակների իրավունքների վերականգնումը կատարվում է

ներպետական մակարդակում՝ այդ «ուղենիշ վճռի» հիման վրա: Հաշվի առնելով Եվրոպական դատարանի պրակտիկայում առկա այդ զարգացումները և ելնելով «ուղենիշ վճիռների» հիման վրա ներպետական մակարդակում Եվրոպական դատարանի դիմաժ քաղաքացիների իրավունքների վերականգնման հնարավորությունն ապահովելու անհրաժեշտությունից, ներպետական օրենսդրությունը պետք է այս հանգամանքը նույնպես հստակ ամրագրի»:

Վերոգրյալի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության իրավակիրառ պրակտիկայի վերլուծության արդյունքում հանգում ենք այն եզրակացության, որ նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման ինստիտուտը ՀՀ-ում բավարար կարգավորված չէ՝ անձի սահմանադրական արդարադատության իրավունքի իրացումը դարձնելով ոչ արդյունավետ:

Վերլուծելով վիճարկվող նորմի դրույթները՝ պարզ է դառնում, որ այն բավականաչափ հստակ ձևակերպված չէ. պարզ չէ, թե որպես նոր հանգամանք եվրոպական դատարանի վճիռը կամ որոշումը իր գործի վերանայման հիմքում կարող է դնել միայն այն անձը, ում նկատմամբ կայացվել է եվրոպական դատարանի որոշումը/վճիռը, թե՞ նաև այն անձինք, ում իրավունքներին դա վերաբերում է (հաշվի առնելով եվրոպական դատարանի «ուղենիշ (ղեկավար) վճիռների» ինստիտուտի զարգացումը), կամ ի՞նչ ժամկետում վերջիններս իրավունք ունեն դիմելու իրենց նկատմամբ կայացված դատական ակտերի վերանայման համար (եվրոպական դատարանի որոշման/վճռի օրինական ուժի մեջ մտնելու պահից հաշված որոշակի ժամկետում, թե՞ նման որոշման առկայության մասին տեղեկանալուց հետո որոշակի ժամկետում):

Գործող իրավակիրառ պրակտիկան ևս թույլ չի տալիս կանխատեսելի դարձնել նշված նորմի կիրառումը, քանզի տարբեր դատական գործերով տարբեր դատարանների կողմից տարբեր դիրքորոշումներ են արտահայտվում և միմյանցից տարբերվող որոշումներ կայացվում, այսինքն՝ նշված խնդիրը լուծված չէ նաև իրավակիրառ պրակտիկայով:

Նման պարագայում անձի՝ արդար դատաքննության և դատական պաշտպանության իրավունքը դառնում է դատարանների սուբյեկտիվ մեկնաբանման առարկա և արդյունքում չի երաշխավորում նշված իրավունքների՝ իրենց նպատակային իմաստով և բովանդակությամբ կիրառումը:

Դատական պաշտպանության իրավունքի հիմնական բովանդակությունը հանգում է, տվյալ դեպքում, պետության կողմից այդ իրավունքի իրացման համար արդյունավետ միջոցների և պայմանների ստեղծման պարտականությանը: Անձի՝ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքից աժանցվում է պետության պոզիտիվ պարտականությունը ապահովել այն թե՛ նորմաստեղծ, թե՛ իրավակիրառման գործունեություն իրականացնելիս:

Այսինքն՝ անձը պետք է լիարժեք դատական պաշտպանության իրավունք ունենա, ապահովված լինի արդար դատաքննություն իրականացնելու պետության

պարտավորությամբ, իր իրավունքների լիարժեք պաշտպանության լեզվիսիմ ակնկալիքով:

Հակառակ պարագայում արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի իրացումը դառնում է ոչ մատչելի և թերի, չի բխում իրեն իրավական հռչակած պետության և ժողովրդավարական հասարակության նպատակներից: Ելնելով անձի՝ արդյունավետ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքից, անհրաժեշտ է նախադրյալներ ամրագրել դրա երաշխավորման ու ապահովման համար: Համապատասխան կարգավորման բացակայության կամ թերի կարգավորման պայմաններում չի կարող լիարժեքորեն երաշխավորվել անձի՝ արդար դատաքննության իրավունքն այն բովանդակությամբ, որն անմիջականորեն բխում է ինչպես Սահմանադրության 63-րդ հոդվածի, այնպես էլ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի իմաստից:

Հաշվի առնելով «Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումների հիման վրա ներպետական մակարդակով գործերի վերանայման և վարույթի նորոգման մասին» N R (2000) 2 հանձնարարականը և Եվրոպական դատարանի պրակտիկայում հետևողականորեն զարգացող «ուղենիշ (ղեկավար) վճիռների» ինստիտուտը՝ գտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը պետք է համապատասխանեցնել նշված պրակտիկային և միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորություններին՝ այն պետք է լինի հստակ, կանխատեսելի և նպատակաուղղված, որով առաջին հերթին պետք է երաշխավորվեն անձանց՝ սահմանադրորեն երաշխավորված իրավունքները և ազատությունները: Բացի այդ, եվրոպական դատարանի «ուղենիշ (ղեկավար) վճիռների» ինստիտուտի զարգացումը ևս ենթադրում է, որ Պայմանավորվող կողմերի ներպետական դատական համակարգում նման վճիռները պետք է կիրառվեն ցանկացած դեպքում, երբ առկա է մարդու իրավունքների խախտում, և ոչ թե միայն այն գործով, որով կողմ է հանդիսանում այն անձը, ում նկատմամբ կայացվել է եվրոպական դատարանի վճիռը:

Ամփոփելով վերոգրյալը՝ Կենտրոնը գտնում է.

- ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրությանը խնդրահարույց է:

 Recoverable Signature

Համակարգող՝

X Lyudvik Davtyan

Լյուդվիկ Դավթյան

Lyudvik Davtyan

Signed by: DAVTYAN LYUDVIK 1407840169